# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀայաստանիՀանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, meghricity@mail.ru

N Ե-1483
*29 մայիս 2023թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 59-րդ կետի դրույթների՝ Ձեզ է ներկայացվում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործը, ըստ որի նախատեսվում է Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության՝ 0,01548 հեկտար <<այլ հողատեսք>> հողամասը /կադաստրային ծածկագիր 09-002-0153-0005-ից/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի հողեր» գործառնական նշանակության:

Առդիր՝ էլ նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

*Կատ. Քաղաքաշինության,հողօգտագործման,գյուղատնտեսության,գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ. Հովսեփյան*
*+37428643500*

## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ

ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման և հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի----------- 00-ի N2/փ-00 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, Մեղրի համայնքի ավագանին

Որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն,որպես առաջնահերթ միջոցառում, գյուղատնտեսական նշանակության 0,01548 հա այլ հողատեսքը / կադաստրային ծածկագրեր՝ 09-002-0153-0005-ից/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի օբյեկտների հողեր» գործառնական նշանակության՝ բջջային կայանի օրինականացման համար: :

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

Հաստատում եմ

Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյան

______________

23 ______ 05 ______ 2023թ.

# Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա <<կապի օբյեկտների հողեր>> գործառնական նշանակության փոխադրվող 0,01548 հա հողամասի

Մ 1:10000

## ք. Ագարակ



① 0,01548 հա (Գյուղատնտեսական նշանակության <<այլ հողատեսք>>)

Կադաստրային ծածկագիր՝ 09-002-0153-0005-հց

| Շրջադարձային կետեր | x | y | Գծային չափեր |
|---|---|---|---|
| 1 | X=8604354.7400 | Y=4303326.3660 | 10 |
| 2 | X=8604354.2245 | Y=4303323.9592 | 4.75 |
| 3 | X=8604355.2990 | Y=4303323.8510 | 3.11 |
| 4 | X=8604354.2970 | Y=4303313.9010 | 10.26 |
| 5 | X=8604344.3480 | Y=4303314.9030 | 4.27 |
| 6 | X=8604345.3500 | Y=4303324.8530 | 10.22 |
| 7 | X=8604350.0786 | Y=4303324.3768 | 2.46 |
| 8 | X=8604350.7010 | Y=4303327.4210 | 1.08 |
| 9 | X=8604352.7560 | Y=4303337.4720 | 10 |
| 10 | X=8604356.8800 | Y=4303336.3570 | 10 |
| 1 | X=8604354.7400 | Y=4303326.3660 | |

# ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի 0,01548 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար առաջարկվող տարածքի իրավիճակային հատակագիծ

Մ 1:2000



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Մեղրի համայնք,
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ.
+374 286 4-34-23, +374 286 4-35-
00, meghricity@mail.ru

N **520**
15 մայիս 2023 թ.

**Կ Ա Ր Ծ Ի Ք**

Հողամասի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ

Հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,01548 հա հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի հողեր» գործառնական նշանակությամբ:

Հողամասի նպատակային նշանակության փոփոխման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասում՝ առանց հողամասի նպատակային նշանակության փոփոխության կառուցվել է բջջային կայան: Հողամասի նպատակային նշանակության փոփոխության հաստատման դեպքում նշված բջջային կայանը և սպասարկման ու պահպանման համար առանձնացված հողամասը օրենքով սահմանված կարգով օտարվելու է «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը, ինչի արդյունքում կավելանան համայնքի սեփական եկամուտները և խթան կհանդիսանա համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Տվյալ հողաշինարարական գործի վերաբերյալ ներկայացնում եմ դրական կարծիք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

Կատ. Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ. Հովսեփյան հեռ. 0286-4-35-00

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Մեղրի համայնք,
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ.
+374 286 4-34-23, +374 286 4-35-
00, meghricity@mail.ru

N **516**
14 մայիս 2023 թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է այն մասին, որ Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,01548 հեկտար հողամասից (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0153-0005-hg) 70 մետր շառավղով հեռավորության վրա միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհներ առկա չեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

Կատ. Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ. Հովսեփյան հեռ. 0286-4-35-00

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Մեղրի համայնք,
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ.
+374 286 4-34-23, +374 286 4-35-
00, meghricity@mail.ru

N **515**
14 մայիս 2023 թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.01548 հեկտար /կադաստրային ծածկագիր՝ 09-002-0153-0005-ից/ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

Կատ. Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ. Յովսեփյան հեռ. 0286-4-35-00

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| Սեփականատեր | ՀՀ, Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, ք. Ագարակ | Հաստատում եմ 05 2023թ. |
|---|---|---|
| | Մարզ, համայնք, հասցե | Մեղրի համայնքի ղեկավար |
| | Հողահատկացման հիմք | ատոմ, ազգանուն, հասցե |




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.01548 |
| Ծածկագիր | 09-002-0153-0005-հց |
| Նպատակային նշանակություն | Գյուղատնտեսական |
| Գործառնական նշանակություն | Այլ հողեր |
| *Լրացուցիչ նշումներ* | |

| Շրջադարձային /բեկման/ կետեր | Հողամասի Կոորդինատներ X | Y | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| 1 | 8604344,348 | 4303314,903 | 10,00 |
| 2 | 8604345,350 | 4303324,853 | 4,75 |
| 3 | 8604350,078 | 4303324,376 | 13,37 |
| 4 | 8604352,756 | 4303337,472 | 4,27 |
| 5 | 8604356,880 | 4303336,357 | |

| Մասշտաբ 1:200 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Արփինե Հարությունյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0429 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<ՄՈՏԱՐ>> ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 09421859 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 30.01.23 |
| | հատակագծի կազմման | 01.02.23 |
| | | Կ.Տ. |

| Շրջադարձային /բեկման/ կետեր | X | Y | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| 6 | 8604354,225 | 4303323,959 | 1,08 |
| 7 | 8604355,299 | 4303323,851 | 10,00 |
| 8 | 8604354,297 | 4303313,901 | 10,00 |
| 1 | 8604344,348 | 4303314,903 | |

**1. Շարժական տաղավար**

| Շրջադարձային /բեկման/ կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| | X | Y | |
| 1 | 8604346,724 | 4303321,623 | 0,93 |
| 2 | 8604346,828 | 4303322,544 | 1,32 |
| 3 | 8604348,135 | 4303322,397 | 0,75 |
| 4 | 8604348,220 | 4303323,145 | 4,08 |
| 5 | 8604352,275 | 4303322,688 | 2,42 |
| 6 | 8604352,004 | 4303320,284 | 4,08 |
| 7 | 8604347,949 | 4303320,741 | 0,74 |
| 8 | 8604348,032 | 4303321,476 | 1,32 |
| 1 | 8604346,724 | 4303321,623 | |

**2. Բջջային կայան**

| Շրջադարձային /բեկման/ կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| | X | Y | |
| 1 | 8604349,354 | 4303319,016 | 0,85 |
| 2 | 8604349,481 | 4303319,854 | 0,78 |
| 3 | 8604350,254 | 4303319,737 | 0,85 |
| 4 | 8604350,127 | 4303318,900 | 0,78 |
| 1 | 8604349,354 | 4303319,016 | |

**3. Բաց ենթակայան**

| Շրջադարձային /բեկման/ կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| | X | Y | |
| 1 | 8604350,701 | 4303327,421 | 10,26 |
| 2 | 8604352,756 | 4303337,472 | 4,27 |
| 3 | 8604356,880 | 4303336,357 | 10,22 |
| 4 | 8604354,740 | 4303326,366 | 4,17 |
| 1 | 8604350,701 | 4303327,421 | |

| Մասշտաբ 1:200 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Արփինե Հարությունյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0429 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<ՍՈՅԼ>> ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 09421859 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 30.01.23 |
| | հատակագծի կազմման | 01.02.23 |

Կ.Տ.

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«ԶԵՓՅՈՒՌ ԱՐՏ» ՍՊԸ տնօրեն՝

_______________ Է. Բաղդասարյան

«__20__» ____03____2023թ.

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ Սյունիքի մարզի, Ագարակ քաղաքի մոտակայքում տեղադրված հիմնական բջջային կայանի տեխնիկական վիճակի գնահատման և հետագա շահագործման հնարավորությունների վերաբերյալ:**

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն Մեղրիի համայնքապետարանի և «ԶԵՓՅՈՒՌ ԱՐՏ» ՍՊԸ-ի միջև 2023թ մարտի 10-ին կնքված N ՄԱ-ԾՁԲ-23/12 պայմանագրի: Եզրակացություն տալու նպատակով «ԶԵՓՅՈՒՌ ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա N 15554 տրված 30.10.2012թ.) կատարվել է Ագարակ քաղաքի մոտակայքում տեղադրված բջջային կայանի փաստաթղթերի ուսումնասիրություն, ակնադիտական հետազննություն, չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ աշխատանքային նախագիծը մշակվել է 2007թ «ԱԶԻՄՈՒՏ» ԲԲԸ-ան կողմից՝ «ՏՍԿ» հեռահաղորդակցության շինարարական կազմակերպության հետ կնքված N-02 պայմանագրի և N-48 լրացուցիչ համաձայնագրի հիման վրա:

**Կայանի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները**

ՀՀ Սյունիքի մարզի, Ագարակ համայնքում տեղադրված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հիմնական կայանը պողպատյա տարածական համակարգ է, տեղադրված է միաձույլ երկաթբետոնյա հիմքի վրա, բաղկացած է 24.0մ կայմից և սարքավորումներից: Կառուցվել է 2007-2008 թվականներին: Կայանը տեղադրված է հարթեցված տեղանքում, եզրափակված է 10.0x10.0մ չափերի պողպատյա ցանկապատով (տես նկ. 1): Կայմին կից տեղադրված է 2.30x4.00մ հատակագծային չափերի մետաղական շարժական տաղավար (տես նկ. 2): Կայմի վրա տեղադրված

բջջային կապի սարքավորումների սպասարկման նպատակով կայմի դրսի կողմից իրականացված է մետաղական աստիճան՝ առանց անվտանգության համապատասխան պաշտպանիչ զամբյուղի:





Նկ. 1. Կայանի տեսքերը





Նկ.2 Տաղավարի տեքերը

**Կայանի կոնստրուկտիվ լուծումները**

Կայանի կոնստրուկտիվ լուծումը տրված է մեկ կենտրոնական և չորս խարսխային հիմքերի միաձույլ համակարգի տեսքով: Կենտրոնական հենարանն ունի 1600x1600մմ, իսկ խարսխայինը՝ 2000x2500մմ հատակագծային չափեր: Կայմի տարածական համակարգը տեղադրված է կենտրոնական հենարանի վրա և ծգանների միջոցով ամրացած է չորս եզրային խարսխային հենարանների հետ: Հիմքերի վրա նախատեսված են խարսխային հեղյուսներ (ՆԷ-1, ՆԷ-2) կայմի և ծգաճոպանների ամրակցման համար (տես նկ. 3):

Բոլոր մետաղական դետալները ներկված են հակակոռոզիոն ներկանյութերով:

Մետաղական շարժական տաղավարը տեղադրված է 22սմ տրամագծով թվով 6 մետաղական կանգնակների վրա, որոնց հիմքերն իրականացված են միաձույլ ե/բ-ով: Տաղավարի հատակի նիշը բարձր է սալվածքից 40-45սմ-ով:



Նկ.3 Կայանի և ձգաձողանների հիմքերի վերգետնյա հատվածամասերի տեսքեր

**Հետազննության արդյունքում պարզվել է.**

1. Հիմնական կայանի շինարարական աշխատանքներն իրականացվել են պատշաճ որակով և համապատասխանում են նախագծային լուծումներին:

2. Հիմնական կայանի հիմքերում, մետաղական կոնստրուկցիաներում ձևախախտումներ, ճաքեր, անթույլատրելի վնասվածքներ, կոռոզիայի նշաններ չեն հայտնաբերվել:

3. Հիմքերի վերգետնյա հատվածամասերը չունեն ջրամեկուսիչ շերտեր, որի հետևանքով բետոնե շերտերում հայտնաբերվել են քայքայման չափավոր երևույթներ (տես նկ. 4):



Նկ.4 Բետոնի վերգետնյա շերտի քայքայման տեսքեր

*Հիմնվելով հետազննության արդյունքներին եզրակացնում ենք.*

1. Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի առ 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների». կայանի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար (երկրորդ աստիճան), այն է՝ կոնստրուկտիվ տարրերն ընդհանրապես պիտանի են շահագործման համար, առկա թերությունները ենթակա են վերացման:

2. Համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման մեթոդական ցուցումների»՝ Ագարակ համայնքում տեղադրված հիմնական կայանի սեյսմիկ խոցելիության մակարդակը (վարքը երկրաշարժի դեպքում) գնահատվում է ցածր, այն է՝ օբյեկտի տարածքում 9 բալ և ավելի ըստ MSK-64 սանդղակի (գետնի սպասվելիք առավելագույն արագացումը՝ Amax=0.3g) հնարավոր երկրաշարժի ժամանակ կայանի կոնստրուկցիաներում կարող են առաջանալ չափավոր վնասվածքներ, վնասվածքի աստիճանը 2-րդ՝ համաձայն ՀՀՇՆ 20.04- նորմերի աղյուսակ 24-ի:

3. Անհրաժեշտ է կայանի տարածքում իրականացնել ջրամեկուսիչ շերտ՝ կանխելով բետոնի շերտի քայքայման երույթները և թույլ չտալով մթնոլորտային տեղումների ներթափանցումը հիմնատակ և կոնստրուկտիվ տարրեր:

4. Ելնելով հիմնական կայանի տեխնիկական վիճակից և սեյսմիկ խոցելիության աստիճանից՝ եզրակացնում ենք, որ այն ենթակա է նպատակային շահագործման համար, առկա թերությունները ենթակա են վերացման:

Կատարող՝

*«ԶԵՓՅՈՒՌ ԱՐՏ» ՍՊԸ-ի առաջատար մասնագետ* [signature] *Հ.Հարությունյան*